ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 0009, ԿՈՐՅՈՒՆ 15, ՀԵՌ. (37412) 77 77 25
KORYUN STREET 15, 0009, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA, TEL. (37412) 77 77 25

01/1044-2022
27.05.2022թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԿ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Թ. ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մովսիսյան,

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) է վերապահվել կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման գործառույթը, ինչի շրջանակներում Հանձնաժողովը կուսակցություններից պահանջել և ստացել է անհրաժեշտ տեղեկություններ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը (...) իրականացվում է Հանձնաժողովի կողմից բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից:»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ այդ օրենքի գործողությունը չի տարածվում կուսակցությունների տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման նպատակով աուդիտորական ծառայությունների մատուցման գործարքների վրա, և այն, որ կուսակցությունների՝ 2021 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպություններն ընտրվելու են վերջնական վիճակահանության արդյունքում, իսկ կնքվող պայմանագրի գինը պետք է որոշված լինի մրցույթը հայտարարելիս, աուդիտորական կազմակերպություններին առաջարկում ենք, նշված մրցույթներին մասնակցելու ցանկության

դեպքում, յուրաքանչյուր կուսակցության համար ներկայացնել առանձին գնային առաջարկ՝ կից ձևաչափին համաձայն: Առաջարկվող գինը պետք է ներառի իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աուդիտի արդյունքում տրամադրվում է աուդիտորական եզրակացություն՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տարեկան հաշվետվության արժանահավատության և ճշտության, ինչպես նաև Օրենքի ու այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Գնային առաջարկներն անհրաժեշտ է ուղարկել info@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին. վերջնաժամկետը՝ 03/06/2022թ., ժամը՝ 18.00:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով բաց մրցույթը 2022 թվականին պետք է անցկացվի մինչև հուլիսի 31-ը, իսկ կուսակցությունները 2021 թվականի հաշվետու տարվա վերաբերյալ իրենց տարեկան հաշվետվությունները (Օրենքով նախատեսված դեպքերում նաև դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացությունները) պետք է հրապարակեն մինչև՝ 2022 թվականի սեպտեմբերի 15-ը:

Խնդրում ենք սույն տեղեկատվությունը փոխանցել Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատին անդամակցող աուդիտորական կազմակերպություններին:

Կից տրամադրվում է՝ գնային առաջարկները ներկայացնելու ձևանմուշը, կուսակցություններից ստացված անհրաժեշտ տեղեկությունները:

Առդիր՝ 2 (երկու) էլեկտրոնային ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Կատարող՝
Հայտարարագրերի վերլուծության վարչություն
Տիգրան Ծատուրյան
tts.cpcarmenia@gmail.com
012-77-77-19, 012-77-77-21